ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/22Շ

ք. Երևան «19»«09» 2022թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռ. Ղազարյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Աբրահամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **S-5-7, /Մ-7/ (Շիրակամուտ) – Լեռնավան (S-5-38) ավտոճանապարհի կմ 0+000 – կմ1+142 հատվածի հիմնանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրաարդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնելԿապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 **Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ**, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) տարին: Եթե երաշխիքային ժամկետի

ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **151 806 000** (մեկ հարյուր հիսունմեկ միլիոն ութ հարյուր վեց հազար) ՀՀ դրամ, որից **25 301 000** (քսանհինգ միլիոն երեքհարյուր մեկ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուր երրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուր երրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

Հավելված թիվ 1
«19» «09» 2022թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/22Շծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
Տ - 5 - 7, /Մ-7/ (Շիրակամուտ) – Լեռնավան (Տ – 5-38) ավտոճանապարհի կմ 0+000 – կմ1+142 հատվածի հիմնանորոգման աշխատանքերի

ՀՀ հազար դրամ

Հ/հ	Աշխատանքներիանվանումը	Չափմանմիավոր	Ծավալը	Միավորիարժեքը *	Ընդհանուրարժեքը
1	2	3	4	5	6
I. Հողայինաշխատանքներ					
1	33r-III կարգիբնահողիմշակում և բարձում էքս.1.0մ^3 շ. տ. ա/ի վրա, տեղափոխումլցակույտ 4կմ	մ^3	3,967.30	1.900	7 537.870
2	33r-III կարգիբնահողիմշակում և տեղափոխումբուլդոզերով 50մ կուտակումովբարձումէքս. 1,0մ^{3}շ.տ. ա/ի վրատեղափոխումլցակույտ 4կմ	մ^3	991.83	2.100	2 082.843
3	10e-IV կարգիբնահողիմշակումպահուստումէքս. 1,25մ^{3}շ,տ. բարձում ա/ի և տեղափոխումլիցք 4,0կմ (հարթում,ջրում, խտացում)	մ^3	3,565.90	2.170	7 738.003
				I. Ընդամենը	**17 358.716**
II. Կողայինառուներ					
1	Կողայինառուներիիրականացում 33r-III կարգիբնահողումէքս. 0,65 մ^{3}շ.տ. ա/ի վրատեղափոխումլցակույտ 4,0կմ միջ. հեռ.	մ^3	35.4	1.715	60.711
				II. Ընդամենը	**60.711**
III. Կողնակ					
1	Կողնակներիամրացումավազակոպճայիններյութով h=9սմ,	մ^2	2,765.10	0.987	2 729.154
2	10e-IV կարգիբնահողիմշակումպահուստումէքս. 1,25մ^{3}շ,տ. բարձում ա/ի և տեղափոխումլիցք 4,0կմ (հարթում,ջրում, խտացում)	մ^3	442.42	2.170	960.051
				III.Ընդամենը	**3 689.205**
IV. Երթևեկելիմաս					
1	Ճ տիպիմանրահատիկխիտ ա/բ h=4սմ	մ^2	7,478.60	4.600	34 401.560
2	Հիմքպատրաստիխճայինխառնուրդիցմշակվածբիտումով 3,5% ըստքաշի h=5սմ (բարձրծակոտկենխճային ա/բ),	մ^2	7,478.60	4.100	30 662.260
3	Խճավազայինհիմք C-5 h=16սմ	մ^2	7,745.25	1.370	10 610.993
4	Հատիկավորենթահիմք h=10սմ (ավազակոպիճ)	մ^2	10,174.28	0.700	7 121.996
				IV. Ընդամենը	**82 796.809**
V. Իջատեղեր					
1	Ճ տիպիմանրահատիկխիտ ա/բ h=4սմ	մ^2	387.2	5.300	2 052.160
2	Խճավազայինհիմք C-5 h=12սմ	մ^2	387.2	1.500	580.800

3	33rIII կարգիբնահողիքանդումէքս. 0,65մ^{3}շ.տ. բարձում ա/ի և տեղափոխումլցակույտ 4,0կմ	մ^3	54.63	1.900	103.797
4	10e-IV կարգիբնահողիմշակումպահուստումէքս. 1,25մ^{3}շ,տ. բարձում ա/ի և տեղափոխումլիցք 4,0կմ(հարթում, ջրում, խտացում)	մ^3	10.0	2.170	21.700
5	Ավազակոպճայինշերտ h=10սմ (խողովակիտակ)	մ^3	0.70	7.000	4.900
6	Մետաղականխողովակների փ273մմ / 5 մմտեղադրում	գծ. մ	20.0	40.000	800.000
7	Մետաղական փ273մմ խողովակիջրամեկուսացում (2 շերտտաքբիտումով)	գծ. մ	19.60	2.400	47.040
8	Վաքիհետմիացմանմիաձույլբետոն B-20	մ^3	0.04	80.000	3.200
				V. Ընդամենը	3 613.597
VI. Ե/բ 30x34սմ վաքեր					
1	Ավազակոպճայինշերտ h=10սմ (վաքերիտակ)	մ^3	8.58	7.000	60.060
2	Հավաքովի ե/բ 30x34սմ վաքերիտեղադրում	գծ.մ	132	18.000	2376.000
3	Ջրամեկուսացում (2 շերտտաքբիտումով)	մ^2	166.32	2.400	399.168
4	Մետաղականխողովակների փ325 մմ / 5մմ տեղադրում	գծ.մ	7.0	55.000	385.000
5	Մետաղական փ325մմ խողովակիջրամեկուսացում (2 շերտտաքբիտումով)	գծ.մ	6.8	2.800	19.040
6	33rIII կարգիբնահողիքանդումձեռքով, բարձում ա/ի և տեղափոխումլցակույտ 4,0կմ	մ^3	2.52	10.000	25.200
7	Ավազակոպճայինշերտ h=10սմ	մ^2	0.31	7.000	2.170
				VI. Ընդամենը	**3 266.638**
VII. Նշագծում					
1	Հոծգիծ 1.1՝ (0,1)	գծ▯մ	320	0.095	30.400
2	Ընդհատվողգիծ1.5 1:3 (0,1)	գծ▯մ	522	0.050	26.100
3	Ընդհատվողգիծ 1.6 3:1 (0,1)	գծ▯մ	300	0.050	15.000
4	Նշագծում 1.12 B=0,4 մ	մ^2	3.2	1.350	4.320
				VII. Ընդամենը	**75.820**
VIII.Նշաններ					
1	Նախազգուշացնող	հատ	4	33.000	132.000
2	Առավելության	հատ	25	33.000	825.000
4	Հատուկթելադրանքի	հատ	5	38.000	190.000
5	Լրացուցիչտեղեկատվության	հատ	1	45.000	45.000
6	Տեղեկատվության (անհատանանախագծում)	մ^2	11.29	50.000	564.500
7	Բետոն B-15	մ^3	4.31	80.000	344.800
8	Կանգնակմետ▯խողովակ 57x4մմ	հատ	41	20.000	820.000
				VIII. Ընդամենը	**2 921.300**
IX.Արգելափակոցներ					
1	Նորմետաղականարգելափակոցներ թիթեղ 6=4մմ քայլը – 4մ շվելեր N16 L-1,75մ	գծ▯մ	260	28.400	7 384.000
2	Ուղղորդսյուներ (պոլիմերային) C-1	հատ	48	12.000	576.000
				IX. Ընդամենը	**7 960.000**
X. Ոռոգմանջրատար					
1	Մետաղականխողովակների փ325 մմ /5 մմտեղադրում	գծ.մ	12.50	50.000	625.000
2	Մետաղական փ325մմ խողովակիջրամեկուսացում (2 շերտտաքբիտումով)	գծ.մ	12.50	2.200	27.500

3	33rIII կարգիբնահողիքանդումձեռքով, բարձում ա/ի և տեղափոխումլցակույտ 4,0կմ	մ³	4.50	5.000	22.500
4	Ավազակոպճայինշերտ h=10սմ	մ³	0.56	5.000	2.800
5	d=159 մմ δ=5 մմոռոգմանջրագծիմետաղականխողովակիապամոնտաժում և մոնտաժում	գծ.մ	15.00	1.000	15.000
6	d=159 մմ δ=5 մմոռոգմանջրագծիմետաղականխողովակիներքաշումպատյանիմեջ	գծ.մ	12.50	0.450	5.625
				X. Ընդամենը	**698.425**
XI. Ջրհոներիկառուցումմիաձույլբետոնից					
1	Հող. աշխատանքներջրհորիփոսորակներիփորմանհամար էքս.0.65 մ³շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 4.0կմ հեռ. 33r-III	մ³	1.90	1.000	1.900
2	Հող. աշխատանքներջրհորիփոսորակներիփորմանհամար էքս.0.65 մ³ կողքիվրակուտակելովհետադարձլիցքիհամար 33r-III	մ³	1.30	1.000	1.300
3	Ավազակոպճայիննախապատարաստականշերտ h=10սմ	մ³	0.16	7.000	1.120
4	Ջրհորիկառուցումմիաձույլբետոնից B 20. F100	մ³	1.13	70.000	79.100
5	Քսվածքայինջրամեկուսացում 2 շերտտաքբիտումով (բետոն)	մ²	6.64	2.800	18.592
6	Հետադարձլիցքձեռքիաշխատանքով	մ³	1.30	10.000	13.000
7	Մետաղականցանցիպատրաստում և տեղադրում	կգ	66.54	1.020	67.871
				XI. Ընդամենը	**182.883**
XII. ԿՄ0+331-ում կամրջայինանցմանվերնորոգում					
1	Վերանորոգմանաշխատանքներիրականացնելուընթաց քումտրանսպորտայինմիջոցներիերթևեկությունը ճան. նշաններիպատրաստում և տեղադրում՝ հետագակազմատումով և վերադարձ 50%: Արգելող – 3.1 (2 հատ): Տեղեկատվության – 6,17 (2 հատ):	հատ	4	30	120.000
2	Երթևեկայինմասիքայքայված ա/բ ծածկիկազմատումպնևմագործիքովկույտավորում և բարձում ա/ի 0,65մ3 շ.տ. էքս. և տեղափոխումլցակույտ 4,0կմ հեռ՚վրա:	մ³	19.79	10	197.900
3	Երթևեկայինմասիխճիկազմատում 0,65մ3 շ.տ. էքսբարձում ա/ի և տեղափոխումլցակույտ 4,0կմ հեռավորությանվրա:	մ³	15.83	2	31.660
4	Բարձրացված ե/բ մայթերիբլոկներիկազմատում 5տ բ.բամբարձիչով, բարձում ա/ի և տեղափոխումլցակույտ 4,0կմ հեռավորությանվրա: Չափ - 36x124x433սմ, P1=1,47տ:	մ³	4.704	5	23.520
5	Մայթերիբլոկներիմիաձույլբետոնեհենակներիկազմատումպնևմագործիքով, կույտավորում և բարձում ա/ի ձեռքով: Տեղափոխումլցակույտ 4,0կմ հեռավորությանվրա:	մ³	0.52	5	2.600
6	Հակադարձպատերի ե/բ հատվածներիկազմատումպնևմագրոծիքով: Կույտավորում և բարձում ա/ի 0,65մ3 շ.տ. էքս.:Տեղափոխումլցակույտ 4,0կմ հեռավությանվրա:	մ³	14.0	10	140.000
7	Ե/բ պահարանայինպատերիկազմատումպնևմագործիքովկույտավորում և բարձում ա/ի ձեռքով:	մ³	5.8	10	58.000

	Տեղափոխումլցակույտ 4,0կմ հեռավորությանվրա:				
8	Նույնըթռիչքայինկառուցվածքներիհեծաններիկոնսոլներ իմիաձույլ ե/բետոնը:	մ³	0.8	10	8.000
9	Նույնըհեծաններիմիավորման ե/բետոնը:	մ³	4.1	10	41.000
10	Վնասվածդեֆորմացիոնկարերիվերջնակազմատումբարձում ա/ի ձեռքով: Տեղափոխումլցակույտ 4,0կմ հեռավորությանվրա:	գծ□մ	26.1	5	130.500
11	Հունիուղղմանհողայինաշխատանքներբուլդոզերով (մուքում և կամրջատակում):Գրունտի (6в-III) տեղափոխումմինչև 50մ:	մ³	190.0	2	380.000
12	Խրամուղուփորմանհողայինաշխատանքներ (6в-III) ձեռքով՝ միջանկյալհենարանիհիմքինորոգմանհամար: Ջրահեռացումըպոմպովջրիհոսքը 60մ³/ժ:	մ³	6.0	15	90.000
13	Միջանկյալհենարանիհիմքիվերանորոգմանմիաձույլբետոն:	մ³	10.60	100	1 060.000
14	Միջանկյալհենարանիիրանի և ֆերմատակիմակերևույթներինորոգում M200 մակնիշիցեմենտայինշաղախով (տորկրետավորմամբ), ամրանավորվածցանցով (50x50)մմ Ø4 Вр- I, P=0,230տ:	մ²	58.05	15	870.750
15	Խրամուղուհակադարձլիցքիիրականացում (6в-III):	մ³	2.0	10	20.000
16	Ձախափնյա (N1) հենարանիերկայնքովխրամուղուփորմանհողայինաշխատանքներձեռքով (6в-III):Ջրահեռացումըպոմպովջրիհոսքը 60մ³/ժ:	մ³	12.0	15	180.000
17	Ձախափնյա (N1) հենարանիհիմքիվերանորոգմանմիաձույլբետոն:	մ³	13.80	100	1 380.000
18	Հակադարձլիցքիիրականացում (6в-III):	մ³	3.0	10	30.000
19	Ձախափնյահենարանիիրանումհորատանցքերիհորատում (հորիզոնական) d=40մմ (L1=15սմ), հետագավերանորոգմաննպատակով:	հատ	77	1	77.000
20	Հենարանիիրանումպողպատեխարիսխների Ø16 AIII պատրաստում և տեղադրում:	տն	0.033	1000	33.000
21	Հենարանիիրանիվերանորոգումմիաձույլամրանավորվածբետոնով, աՁպՁØ10 AIII=49,71կգ/մ3:	մ³	6.55	100	655.000
22	Աջափնյա (N3) հենարանիիրանի և ֆերմատակիմակերևույթներինորոգում M200 մակնիշիցեմենտայինշաղախով (տորկրետավորմամբ), ամրանավորվածցանցով (50x50)մմ Ø4 Вр- I, P=0,133տ:	մ²	33.60	15	504.000
23	Նույնըհակադարձպատերիիրանները P=0,143տ:	մ²	36.0	15	540.000
24	Հակադարձպատերիաճեցմանհամարհորատանցքերիհորատում (ուղղահայաց) d=40մմ (L1=20սմ):	հատ	252	1	252.000
25	Պողպատեխարիսխների Ø18 AIII պատրաստում և տեղադրում:	տն	0.2014	1000	201.400
26	Հակադարձպատերիաճեցմանմիաձույլբետոնիիրականացում:	մ³	14.0	100	1 400.000
27	Պահարանայինպատերիիրականացմանհամարհորատանցքերիհորատում (ուղղահայաց) d=40մմ (L1=20սմ):	հատ	64	1	64.000
28	Պողպատեխարիսխների Ø18 AIII պատրաստում և տեղադրում:	տն	0.0514	1000	51.400

29	Եզրայինհենարաններիֆերմատակերիպահարանայինպատերիմիաձույլերկաթբետոնիհիրականացում.	մ³	5.76	100	576.000
30	Պահարանայինպատերիգրունտիհետշփվողմակերևույթներիքսվածքայինջրամեկուսացում՝ 2 շերտտաքբիտումով:	մ²	19.20	3	57.600
31	Թռ. կառուցվածքների Т-ձևհեծաններիմիմյանցհետմոնոլիտացման (միավորման) ե/բետոն.	մ³	4.81	100	481.000
32	Թռ. կառուցվածքներիեզրային Т-ձևհեծաններիարտաքինեզրերիմիաձույլ ե/բետոն:	մ³	0.91	100	91.000
33	Թռիչքայինկառուցվածքներիվնասվածմակերևույթների վերանորոգում М200 մակնիշիցեմ. ավազայինշաղախով (տորկրետավորումով):	մ²	47.60	15	714.000
34	Հարթեցնողշերտիցեմենտայինշաղախմայթիբլոկներիսահմաններում Н=3սմ:	մ²	42.94	6	257.640
35	Նույնըանվահրիչներիհատվածներում Н=2սմ:	մ²	26.78	5	133.900
36	Հոսքայինեռանկյունուիրականացումմիաձույլմանրահատիկբետոնից, $H_{միջ}$=6,1սմ:	մ²	104	10	1 040.000
37	Թռիչքայինկառուցվածքիսոսնձայինջրամեկուսացում	մ²	175.40	3	526.200
38	Ցեմենտայինշաղախմայթիբլոկներիտակ Н=3սմ:	մ²	37.75	6	226.500
39	Նույնըանվահրիչներիհատվածներում Н=2սմ:	մ²	16.40	5	82.000
40	Т-1-0,75 մակնիշիմայթերիբլոկներիտեղադրումթռիչքայինկառուցվածքներում:	հատ	6	390	2 340.000
41	Նույնըկցորդումներում.	հատ	4	390	1 560.000
42	БР-1 մակնիշիանվահրիչներիբլոկերիպատրաստում և տեղադրումթռիչքայինկառուցվածքներիհատվածներում.	հատ	6	100	600.000
43	Նույնըկցորդումներում.	հատ	4	100	400.000
44	Պաշտպանիչշերտմիաձույլբետոնից W6, Н=4սմ ամրանավորվածցանցով (100x100)մմ Ø4 Вр- I:	մ²	104	15	1 560.000
45	Դեֆորմացիոնկարերիհիրականացում:	գծ□մ	26.10	15	391.500
46	Երթ. մասիներքինշերտի Н=5սմ մանրահատիկ "Б" տիպիխիտ ա/բ ծածկիհիրականացում:	մ²	104.80	5	524.000
47	Երթ. մասիվերինշերտի Н=4սմ մանրահատիկ "Б" տիպիխիտ ա/բ ծածկիհիրականացում:	մ²	115.60	4	462.400
48	Մայթերիսոսնձայինջրամեկուսացում:	մ²	20.50	3	61.500
49	Մայթերիմանրահատիկ "Б" տիպիխիտ ա/բ Н=4սմ:	մ²	20.50	4.5	92.250
50	Մայթիենթաթեքության М200 մակնիշիցեմենտայինշաղախիհիրականացումՀմիջ=3սմ:	մ²	5.20	6	31.200
51	Անվահիրչներիհենակներիմիաձույլբետոնիհիրականացում:	մ³	1.29	100	129.000
52	Թռիչքայինկառուցվածիանվահրիչներիբլոկներիվրապողպատեբազրիքներիպատրաստում և տեղադրումներկումով.	գծ□մ	17.40	60	1 044.000

53	Հակադարձպատերիհատվածներումանվահրիչներիբլոկներիվրապողպատեբազրիքներիպատրաստում և տեղադրումներկումով.	գծ□մ	10.0	60	600.000
54	Թռիչքայինկառուցվածիմայթիբլոկներիվրապողպատեբազրիքներիպատրաստում և տեղադրումներկումով.	գծ□մ	17.40	60	1 044.000
55	Հակադարձպատերիհատվածներումմայթիբլոկներիվրապողպատեբազրիքներիպատրաստում և տեղադրումներկումով.	գծ□մ	10.0	60	600.000
56	Կցորդմանհատվածներումխրամուղիներիփորմանհողայինաշխատանքներ (10e-IV կարգիգրունտում) ձեռքովանվահրիչներիտեղադրմանհամար:	մ³	1.8	15	27.000
57	Ավազակոպճայիննախապատրաստումկցորդմանանվահրիչներիբլոկերիտակ:	մ³	0.45	10	4.500
58	Ավազակոպճայիննախապատրաստմանվերևըցեմենտայինշաղախիհրականացում H=3սմ:	մ²	4.20	10	42.000
59	Հավաքովի ե/բետոնեանվահրիչներիբլոկներիտեղադրումկցորդումներում.	հատ	4	100	400.000
60	Անվահրիչներիուղղահայացգծանշում:	մ²	51.50	2.07546	106.886
61	Անվտանգությանգոտիներիհորիզոնականգծանշում-հոծ:	գծ□մ	57.40	2	114.800
				XII. Ընդամենը	24 862.606
				Ընդհանուրը	147 486.710
				Չնախատեսվածծախսեր**	4 319.290
				Ամբողջը /ՀՀ դրամ/	151 806.000

*Պայմանագրի կատարումը փուլային չէ և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված է պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ռ Ղազարյան>> ՍՊԸ
ք Վանաձոր, Տավրոս 21 փ 22 տ
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ 1150016117777758
ՀՎՀՀ 06958302
Տնօրեն՝ Արթուր Աբրահամյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ2
«19» «09» 2022թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/22Շծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Տ - 5 - 7, /Մ-7/ (Շիրակամուտ) – Լեռնավան (Տ – 5 - 38) ավտոճանապարհի կմ 0+000 – կմ1+142 հատվածի հիմնանորոգման աշխատանքերի

No	Կապալառուիկողմիցկատարվելիքաշխատանքներիառանձինտեսակներիանվանումներ	Աշխատանքներիկատարմանժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
0	Լաբորատորփորձարկումներ	ֆինանսականմիջոցներնախատեսվելուդեպքումկողմերիմիջևկնքվողհամաձայնագրիուժիմեջմտնելուցհետո	ֆինանսականմիջոցներնախատեսվելուդեպքումկողմերիմիջևկնքվողհամաձայնագրիուժիմեջմտնելու ց90օրհետո
1	Հողայինաշխատանքներ	ֆինանսականմիջոցներնախատեսվելուդեպքումկողմերիմիջևկնքվողհամաձայնագրիուժիմեջմտնելուցհետո	ֆինանսականմիջոցներնախատեսվելուդեպքումկողմերիմիջևկնքվողհամաձայնագրիուժիմեջմտնելու ց40օրհետո
2	Երթևեկելի մաս	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 80 օր հետո
3	Կողնակներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 80 օր հետո
4	Կամուրջի վերանորոգման աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո
5	Ջրահեռացման համակարգեր	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 45 օր հետո
6	Անվտագության էլեմենտներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 օր հետո

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	*ֆինանսականմիջոցներնախատեսվելուդեպքումկողմերիմիջևկնքվողհամաձայնագրիուժիմեջմտնելուցհետո*	*ֆինանսականմիջոցներնախատեսվելուդեպքումկողմերիմիջևկնքվողհամաձայնագրիուժիմեջմտնելուց90օրհետո, բայցոչուշ, քանֆինանսականմիջոցներնախատեսվելուտարվանոյեմբերի 30-ը*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ռ Ղազարյան>> ՍՊԸ

ք Վանաձոր, Տավրոս 21 փ 22 տ

<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ

ՀՀ 1150016117777758
ՀՎՀՀ 06958302
Տնօրեն՝ Արթուր Աբրահամյան

/ստորագրություն/
Կ.Տ.

«19» «09» Հավելված N 3
2022թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/22Շծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնիհամարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմացվճարումներընախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստամիսների, այդթվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/585	**S-5-7, /Մ-7/ (Շիրակամուտ) – Լեռնավան (S-5-38) ավտոճանապարհի կմ 0+000 – կմ1+142 հատվածի հիմնանորոգման աշխատանքեր**	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ռ Ղազարյան>> ՍՊԸ

ք Վանաձոր, Տավրոս 21 փ 22 տ

<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ

ՀՀ 115001611777758
ՀՎՀՀ 06958302
Տնօրեն՝ Արթուր Աբրահամյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ 4
« » « » 2022թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/22Շծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցինսույնարձանագրությունըհետևյալիմասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրիկողմըկատարել է հետևյալաշխատանքները՝

N	Կատարվածաշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրիհամառոտշարադրանքը	քանակականցուցանիշը		կատարմանժամկետը		Վճարմանենթակագումարը /հազարդրամ/	Վճարմանժամկետը /ըստվճարմանժամանակացույցի/
			ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի	ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրություններկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրըևդրական եզրակացությունըհանդիսանումենսույնարձանագրությանբաղկացուցիչմասը և կցվումեն:

Աշխատանքըհանձնեց	Աշխատանքըընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » « » 2022թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/22Շծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրիարդյունքըՊատվիրատուինհանձնելուփաստըֆիքսելուվերաբերյալ

Սույնով արձանագրվումէ, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և_____-ի
ՊատվիրատուիանունըԿապալառուիանունը
(այսուհետ՝ Կապալառու)միջև20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափմանմիավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն